ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 մայիսի 2025թ. թիվ 249-Ա

## Ա.ԾԱՌՈՒԿՅԱՆԻՆ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԼԱԳՈԴԱՐՆՈՅԵԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին» N 259-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2025 թվականի մարտի 2-ի թիվ 211-Ա և 2025 թվականի մայիսի 21-ի թիվ 246-Ա որոշումները, հաշվի առնելով Ա.Ծառուկյանի համաձայնությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

«ՀՀ Լոռու մարզի Բլագոդարնոյեի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Անի Կարապետի Ծառուկյանին 2025 թվականի մայիսի 22-ից նշանակել «ՀՀ Լոռու մարզի Բլագոդարնոյեի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող՝ մինչև օրենքով սահմանված կարգով «ՀՀ Լոռու մարզի Բլագոդարնոյեի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի նշանակումը:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2025թ. մայիսի 22
ք.Վանաձոր